

## ՊԱՏՃԵՆ

ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԿՈՆԴԱԿԻ

ՎԵՀՇԵՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՑԻ ԸՆԴԻՍ



ԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՔՐԻՍ-  
ՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱ-  
ՆԵԼԻ ԿԱՄՈՔՆ ԱՍ-  
ՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈ-  
ՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՒ-  
ՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐՈԳՈՑՆ  
ՊԱՏՐԻԱՐՔ ՀՈՄՈԶԳՈԿՈՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ  
ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ  
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԵ  
ԷԶՄԻԱԾՆԻ.

**Պ**ատճեն քեզ Ըստքելական Եկեղեցի  
Հայաստանեայց, Թագէոսի, Ծարդուղի-  
մէոսի և Գրիգորի աւետարանաւ ծնեալք ի Քրիս-

տոս. աճեալք և զարգացեալք Հաւատովք Աստուածաշտութեան:

**ՈՂ. Գ. ԱՅՆ** քեզ Մայր Սիօն՝ լեառն Աստուծոյ Երուսաղէմ եթէ ի քեզ երկեցաւ լոյսն աշխարհի Մարմացեալ Փրկիչն, նոյն Միածին էջ ի Ճօրէն, եղ զիմն Այրարատայ Եկեղեցւոյն լուսակերտեալ սուրբ Խջմիածնի:

**ՈՂ. Գ. ԱՅՆ** քեզ Տուն և Առաքելական Եթոռ Սրբոց Յակովեանց: Ողջոյն Համայն միաբանական ուխտին Հայոց, որ իբրև խաչակիր զինուոր տըքնիք և պաշտէք զտնօրինական սուրբ տեղիս և ամենայն անձնուիրութեամբ պաշտպանէք զվիճակն Հայոց ցանկալին և նախանձելին Համայնից ազանց:

**ՈՂ. Գ. ԱՅՆ** Զեզ, Կաթուղիկոսունք և Պատրիարքունք, որ ընդիս Համալծակից Եղբայր էք ի վարել և տանել զպաշտոն Քրիստոսի Եկեղեցւոյն. զիտէք թէ քանի մեծ է պատասխանատուութիւն մեր առաջի մեծ Հովուապետին, զի իւրաքանչիւր ոք ի մէնջ զիւր Հօտին Համարս ունի տալ:

**ՈՂ. Գ. ԱՅՆ** Զեզ, Հովիւք և Առաջնորդք Փոքրիկ Հօտին Հայոց, որ արթուն աչօք Հսկէք և արածէք զհաւատացեալ Հօտն Քրիստոսի, յիշելով զըան Տեառն թէ՝ «Հովիւ քաջ զանձն իւր զնէ ի վերայ ոչխարաց»:

**ՈՂ. Գ. ԱՅՆ** Զեզ, վարդապետք Եկեղեցւոյ, որ ուսուցանէք և աւետարանէք զիանն կենաց. մսիթարեցէք, մսիթարեցէք զժողովուրդ, զի լի եղետատմութեամբ. թողեալ լիցին մեղք իւր, ասէ Աստուած:

**ՈՂ.Թ.ԱՅՆ** Ձեզ, քահանայք Տարձրելոյն Եստուծոյ, որ մատակարար էք սուրբ խորհրդոյ Եկեղեցւոյն, գաստիարակք և պահապան ընտանեկան Արքութեան, և գիտէք թէ քանի մեծ է պաշտօն ձեր:

**ՈՂ.Զ.ԱՅՆ** Ձեզ, Սարկաւագունք, որ խունկ պրկանէք առաջի Աեղանոյն Եստուծոյ և մատակարար էք որբոյն և աղքատին. յիշեցէք զխաղ սարկաւագն մեծին՝ Աերսիսի՝ նմանողք լերուք նմա:

**ՈՂ.Թ.ԱՅՆ** Ձեզ, Դպիրք, որ քաղցրաձայն երգօք Շարականաց և տաղից՝ շարժէք զհողին ջերմեռանդութեան ի ժողովուրդն, պաշտել և սիրել զԵստուած, դուք զվերին սրբաբան դասուցն բերէք նմանութիւն:

**ՈՂ.Թ.ԱՅՆ** Ձեզ, Հարք և Եղբարք վանական ուխտին, որ պահապան հրեշտակք էք մնացեալ նշխարաց վանորէից, որք յաւերժական պարծանաց յիշատակ են մեր նախնի կրօնաւոր և գրասէք սուրբ հարց:

**ՈՂ.Թ.ԱՅՆ** Ձեզ, վարժապետք և ուսուցիչք. Ձեզ յանձնեալ է ազգային կրթութիւն և դաստիարակութիւն մանկանց ի պէս պէս ուսմունս և գիտութիւնս, որոյ նպատակն է միայն վարել և տանել զմարդիկ ի լաւագոյն կեանս. ոչ միայն ի բարեբաստիկ վիճակս աշխարհի, այլև ի Աերին Քրիստոսի արքայութիւն:

**ՈՂ.Թ.ԱՅՆ** Ձեզ, Խմբագիրք Հայոց, որ Ճգնիք անդադար յաշխատութիւնս և իբրև հրապարակախօս մունետիկ, դրով և թղթով վարէք զժողու-

վուրդն ի յառաջդիմութիւն և քաղաքակրթութիւն՝ բանալով զմիտս նոցա ընդունել զլաւն և խորշիլ ի վատէն։ Զգոյշ, զգոյշ, ջանացէք միշտ ի շինել, զի այս է ձեր սեպուհ պարտիք։

**ՈԴ. Գ. ԱՅՆ** Ձեզ, յօրինիչ մատենագիրք և թարգմանիչք պրոց ի զանազան լեզուաց հեղինակութեանց, զորս օգտակար համարիք բարոյական կրթութեան և ձեռնտու արուեստին գիտութեան։

**ՈԴ. Գ. ԱՅՆ** Ձեզ, Բարերար Մեկենասք, որ քաջալերելով զգրասէր աշխատաւոր մշակն՝ ի լոյս հանէք զնորա վաստակն և ընծայէք ազգին, որով ճոխանան և հարստանան աղքատիկ մատենագարանք Հայոց։

**ՈԴ. Գ. ԱՅՆ** Ձեզ, նախանձաւորք սուրբ Կրօնի, եկեղեցասէր, ժողովրդասէր բարեպաշտ Ոգիք, որ շինէք զեկեղեցիս և զգպրանոցս, հաստատելով և պահելով կրօնի և ուսման տաճարս, որով լուսաւորին որդիք եկեղեցւոյ և ժողովուրդն յորդորի յԱստուածաղաշտութիւն, որ քան զամենայն ինչ զօրաւոր է։

**ՈԴ. Գ. ԱՅՆ** Ձեզ, ուսանող մանկունք և օրիորդք, եղբարք և քորք, որ ձեռն ի ձեռն տուեալ ի միասին երթայք և գայք ի կրթութեան տաճարն։ Բարերաստիկ և երջանիկ էք, եթէ հաւասար կրթութեամբ պատահեալ միմեանց ձեռն տայք յաւոր պատկաղութեան Ձերոյ ի սուրբ ամուսնութիւն։

**ՈԴ. Գ. ԱՅՆ** Ձեզ, Մայրաքաղացիք և գաւառական քաղաքացիք, որ պարապիք ի ձեռակերտ ար-

ուեստս և ի շահավաճառութիւնս, ո ՚որ աշխատի  
յառաջ վարել զգործս Զեր իմաստուն անտեսու  
թեամբ և ճարտարագիտութեամբ, միշ ո մրցելո  
և զարդանալով ըստ պահանջման ժամանակամասն ժակին:

**ՈԴ. ԹԱՅԻՆ** Զեզ, ընտակիչք դաշտան և լ  
րանց շինական երկրագործ ժողովուրդ, ու ո սիրէ  
զհողն և մաճ, զոչխարն և տաւար, դուք ո շխար  
բարի և անխարդախ մշակն էք, դուք հաւ ոազս  
որդիք էք նախահօր մերում, զործեցէք զեր կիր  
պահեցէք, զիտելով թէ միայն երկիրն է Զեր կ եա  
և զօրութիւն. միշտ ջանացէք անկորուստ պ  
այդ հայրենատուր ժառանգութիւն:

**Յետ ողջունելոյ** զամենայն դասակարգս Զ  
ժողովուրդ Նայոց, դառնամ արդ պատմել Զ  
թէ զինչ արար Տէր ընդ իս և զիտէք արդէն զ  
հոչակեցաւ ընդ ամենայն աշխարհ:

**ՈՇ որպէս** կամին մարդիկ, այնպէս առնել Տէր,  
այլ որպէս ինքն կամի և ով կարէ հասու լինել  
անքննին խորհրդոց Կորա. զե ո զիտաց զմիտս Տետ-  
որն և ո եղեւ նմա խորհրդակից թէ խելամուտ ա-  
րացէ զիա:

**Մինչ փոքրիկ** և կրտսեր էի ի մէջ եղբարց և  
արածէի զիմ փոքրիկ հօտն ի լեառն Ա արագայ,  
առ հավանեաւ Քրիստոսի Եւագ ոուրբ Եղանին,  
Զեռն Տետոն կալաւ զիս, ած յերուսաղէմ և կա-  
ցոց ի վերայ Երինն Ոիօնի, ուր երեեցաւ Ծանն  
Ծժիշկ մարդկութեան և վերանորոգիչ Հնացեալ  
մարդոյն:

**Յերեսուն ամաց** անտի մինչեւ ցեօթանատուն ամն

իբրև խեցեղէն մի տկար անօթ միշտ վարեալ և  
գլորեալ ընդ քարքարուտ ելեւէջ առապարս աշ-  
խարհի, այնպէս եղէ զի կարծեցին մարդիկ թէ իս-  
պառ ջախջախեցայ. և զի՞նչ էր, որ կենդանի պա-  
հեր զիս. միայն հեղութիւն, և իսպառ չամքերութիւն:

Ասդ ի Սիօն մօտ էր նորոգիչ Ծրուտն Յիսուս,  
որ անդրէն վերստին նորոգեաց զբեկեալ անօթա:  
Միանդամ և երկիցս հիւանդացայ յոյժ, այնպէս  
թուեցաւ ինձ թէ հասեալ կամ առ դուռն զերեզ-  
մանին, և եղէ ես որպէս զոստայն մերձ ի հատա-  
նիլ սիրտ իմ և շունչ գելաւ յիս, լացի և գոչեցի.  
ով Տէր, զեռ տարաժամէ տօսցի, զեռ բազմա-  
պատիկ պարտս ունիմ առ Քեզ և առ Եկեղեցին,  
թոյլ տուր, դարձո՛ զոգի իմ, զի կեցից և վճարե-  
ցից: Ո՞չ թէ մեռանիմ չմնամ պարտապան առա-  
ջի Քո ահաւոր ատենիդ:

Լուսւ ինձ Տէր և ողորմեցաւ, և յաւել ինձ նոր  
կեանս, վերացոյց ի լեռնէն Սիօնի, եղ ի Սիօն Եյ-  
րարատայ, ի Կաթուղիկէ Եջմիածին և տօսց. Որ-  
դի մարդոյ, դէտ կացուցի զքեղ տանդ Հայոց և  
Հովիւ վարատեալ հօտին սուրբ Գրիգորի: Աչա-  
քեզ և ժամանակ, երթ վճարեալ զպարտս քո:

Խոնարհելով առաջի երկնից Հօր կամաց և մե-  
ծարելով զհամազգային միաձայն ընտրութիւնն,  
ահաւասիկ գամ ի վճարել զմնացորդ նուիրական  
պարտս իմ, զոր ունիմ առ Եկեղեցին Հայաստան-  
եայց և առ Ժողովուրդ Հայոց և գիտէք թէ քա-  
նի շատ բազմապիսի և բազմապատիկ են չափ. և  
կշիռ պարտոցու:

Եյլ ես մինչ հասեալ կամ ի ծերութիւն և անցեալ զեօթանսասուն ամին, մինչ ձեռս ի վեր կալեալ այլքն ածեն ինձ գօտի, ին կարացից վճարել զայնչափ պարտս գոնէ փոքրամասն տաղանդին չափով, զոր ինձ աւանդեալ է Տէրն և պահանջէ շահագործել տոկոսիք և պարզերես կալ առաջի պահանջողին:

**Մինչ խոկամ զարհուրիմ ես, ով Եկեղեցի Հայաստանեայց, որ ընդ ամենայն հեռաւոր աշխարհս սփռեալ կաս տարագրեալ ի հայրենի քո տանէն, ըստութիւն թէ որպէս կարեմ վարել զհովուական տեսչութիւն իմ: Միթէ նստեալ յԱյրարատ՝ մինչ ի Հնդիկո և յԵւրոպ և այլ հեռավայրս զօրեմ տեսանել զՁեզ: Եւ զիարդ հնար է ինձ արածել զհօտն սեփական, որ ընդ ամենայն աշխարհս ցիր և ցան կան, անտես յաշաց իմոց և ուր չկարեն հասանել ոոր այցելութեան իմոյ:**

Եյօ, առաքեցայ ես ի լեռնէն Զիթենեաց, այլ չեմ ազատ առաքեալ, շրջել ոչ ի հեթանոսս, այլ յամենայն եկեղեցիս Հայոց, կենդանի բարբառով քարոզել և ուսուցանել աչօք իսկ տեսանել զցաւս հօտին իմոյ և հոգալ զզարմանն: Եյլ զի՞նչ իցէ մարդոյն դարմանն: Իցէ թէ զթած Սամարացին անցանէր զքեւ:

Աւստի մնայ ինձ միայն, որ ըստ նախնի սովորութեան հօտասեր հովուաց՝ Ծնդհանրական գրով և թղթով խօսիլ ընդ ձեզ, ժողովուրդ Հայոց, թէ յերկրի աստ մինչչե մեռեալ իցեմ և թէ յերկինս, զի և անդ կենդանի եմ հոգւով, ուր հոգիք մեր

Նախնի սուրբ Հարց կան և աղօթեն վասն ձեր:

Այլ ունիմ ես աչս, որ մօտ են և տեսանեն զՁեզ, նոքա են իմ ընարելակից եղբարք, Հովիք և Վռաջնորդք իւրաքանչիւր վիճակաց, որ յանձնեալ է ոչ յինէն, այլ Քրիստոսէն. Հովուել և յանձանձել, պահել և հաստատել ի հաւատոս Վռաքելական Եկեղեցւոյն Հայաստանեայց, որոյ Տիմի Թագէոս և Ծարդուղիմէոս եղին և զողջ շնուածն ած ի կատար հրաշալի Նահատակութեամբ սուրբ Գրիգոր Լուսառորիչն:

Գիտէք իսկ և հռչակեցաւ, թէ յաւուր հանդիսի օժման մերում առաջի Խջման սուրբ Տաճարին՝ ուխտեցի հաւատարիմ մնալ առ այդ Տիմի, և շնուածն առաքելական Եկեղեցւոյս Հայաստանեայց և պինդ պահել զաւանդութիւնս մեր Նախնի սուրբ Հարց, զգուշանալ չխրամատել զցանկն հայրենի:

Եւ դուք իսկ ուխտակից էք ընդ իս և զնոյն ուխտն ունիք ի ձեռնազրութենէ շնորհաց, անարատ և անաղարտ պահել զկնիքն, որ աւանդեալ է մեզ ի Քրիստոսէ յՎռաքելոց և ի սրբազան Հայրապետաց:

Աւստի կայ և մնայ մեզ ամեննեցուն երկիւզածութեամբ ծառայել առաջի Տեառն, զի ունիմք մեք իւրաքանչիւր զմեծ պատասխանատուութիւն ըստ աստիճանի և շնորհաց, որ տուեալք են ի Հոգւոյն պաշտել զեկեղեցին, հոգալ վասն Եկեղեցւոյն և թէ յաշխարհի աստ պատրաստի և առաջի մեր Քրիստոսի խաչ՝ յօժարութեամբ կրել և երթալ զհետ զօրագլխոյն, որ ասաց. «որ ոչ առցէ զիսաչ իւր և Եկեցէ զկնիք իմ» չէ ինձ արժանի»: Հնորհ մեծ է

մեզ, եթէ սիրով և համբերութեամբ կրիցեմք զնոյն խաչ:

Աղօթեցէք վասն իմ, ով գործակից հոգեոր իմ Եղբարք, զի գիտէք թէ խաչն իմ ծանրագոյն է, զոր եղ ի վերայ թիկանց իմոց Եկեղեցին Հայաստանեայց: Այլ թէ դուք զօրավեգ լինիջիք ինձ, որպիսեօք Աիմէօն Աիւրենացին, ես յայնժամ զօրացեալ ի Հոգւոյն՝ բարձեալ զիսաչն սիրով, ածեմ ի կատար Գողգոթային:

Եւ ես աղօթեմ վասն Զեր, զի և դուք զնոյն խաչն համբերատար սիրով բարձեալ երթիջիք զհետ խաչեալ Փրկչին մերոյ, զի անհնարին է մեզ խուսափել ի խաչէն, քանզի ասաց Յիսուս. յաշխարհի աստ նեղութիւն ունիցիք: Եւ զի՞նչ իցէ նեղութիւն մեր առ նեղութիւն նահատակ նախնեաց:

Իսկ դու Եկեղեցի և ժողովուրդ Հայոց, որ ընտրեցիք զիս հովիւ Զեզ, ես ապաստան լինիմ աղօթից ձերոց և հաւատամ թէ լու Տէր ձայնի աղաչանաց Զերոց և պահէ զիս վասն սիրելի եկեղեցւոյն խրոյ:

**Աեցից** ես վասն Զեր և դուք վասն Գրիստոսի:  
**Ամէն:**

## Մ Կ Ր Տ Ի Զ

ԿՈԹՈՒՊԻՆՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ.

Գրեցու անդրանիկ Կոնդակս օրհնութեան ի 15 Գեկ. 1893 ամի Փրկչական եւ ըստ տօմարիս ԱՅԻԳ ի Մայր Աթոռս Հայաստանեայց ի Ա. Էջմիածին.

Ի Վաղարշապատ: